

ք.Գավառ

18.11.2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՄՈՏ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցում էին՝

Անդրանիկ Հակոբյանը	- մարզպետի տեղակալ
Դերենիկ Հովհաննիսյանը	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձում Համբարձումյանը	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
Սպարտակ Ավետիսյանը	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
Խոսրով Խլիլայանը	- <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր

Քննարկվեց՝

1. ՀՀ բնապահպանության նախարարի, ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից համատեղ հաստատված՝ Սևանա լճում ձկան և խեցգետնի որսի արգելման ժամանակահատվածում /2015թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 25-ը և 2016թ. հունվարի 6-ից մինչև հունվարի 20-ը/ իրականացվող միջոցառումների ծրագրի մասին:

Հանձնարարվեց՝

1. **Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դերենիկ Հովհաննիսյանին՝**
 - 1) հետևել, որ մինչև ս/թ. նոյեմբերի 18-ը ավարտվեն մայրուղիներից և <<Սևան>> ազգային պարկի տարածքից լողամիջոցների, որսագործիքների և ժամանակավոր կացարանների դուրս բերման աշխատանքները և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն.
 - 2) ս/թ. նոյեմբերի 18-ից հետո ուսումնասիրել <<Սևան>> ազգային պարկի տարածքում և մայրուղիների վրա գտնվող լողամիջոցների, որսագործիքների, ժամանակավոր կացարանների ու ձկան վաճառքի տաղավարների առկայությունը և ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետին:

- 2. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ Համբարձում Համբարձումյանին՝**
- 1) հետևել ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը, կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել ամենօրյա տեղեկատվություն և աշխատանքների ամփոփման նպատակով յուրաքանչյուր տասնօրյակը մեկ անցկացնել համատեղ խորհրդակցություն /<< բնապահպանության նախարարություն, << Գեղարքունիքի մարզպետարան, << ոստիկանություն/.
 - 2) հսկողություն իրականացնել լճի ափամերձ տարածքների անտառային շերտի պահպանման և ապօրինի ծառահատումների նկատմամբ:
- 3. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /բաժնի վարիչ Հասմիկ Շահբազյան/ և <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանին՝** հանրապետական և մարզային լրատվամիջոցներով պարբերաբար լուսաբանել մարզպետարանի կողմից իրականացվող միջոցառումները:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. Պապուկյան

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ